ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 121 - Ա
23 հունիսի 2014 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 532-Ն որոշմամբ հատկացված միջոցներով կառուցված և հիմնանորոգված օբյեկտների ավարտված շինարարական աշխատանքներն ընդունելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հակոբյան Անդրանիկ - մարզպետի տեղակալ, նախագահ

Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ

Խաչատրյան Գևորգ - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Մելքոնյան Գուրգեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի, համապատասխան օբյեկտների տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող, կապալառու և այլ շահագռգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2. Հանձնաժողովին՝ ավարտված շինարարական օբյեկտները շահագործման ընդունող հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզպետի հաստատմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ